2251
L. IV.

1–10 պահա-թ. 8.



ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆԱՐՈՒԹԻՒՆ ընդունում է ամեն լեզուով Տարազի երեսի մի երրորդական տող առաջին երես 40 կոպ. վերջին երես 25 կոպ. մանրատառ (պրթյա) Արտասահմանից կրկնակի: Շատ անգամ կրկնող յայտարարիչներն տանձին համաձայնութեամբ:

ԱՄԲԱԴՐՈՒԹԻՒՆԸ յօգուածները կը ճանաչէ է, ներկայում փոփոխութեան և չը տպելիքը (երեմ բերից պակաս) չէ վերադարձնում:

Անձնական տեսակցութիւն խմբագրի հետ երեքշաբթի եւ ուրբաթ առաւ. ժ. 11–12:

Հասցէն՝ ԹԻՓԼԻՍ, ред. ТАРАЗЪ.
Rédaction du journal TARAZ. Caucase, Tiflis. Տելիֆօն № 282.

Գեղագիտական, գրական, հասարակական, ֆելիետոնական պատկերազարդ երկշաբաթաթերթ

№ 1. Պրահի, յունուարի 6 — Խմբագիր-հրատարակիչ՝ Տիգրան Նազարեան — Տասնիններորդ տարի 1908

Ազատ լինել չի կարող նա, որ գեռ խաւարի մէջ է եւ չի հասկանում լոյս—ճշմարտութեան գաւառից:



-ի XXV-րդ տարւայ 1907 թ. դեկտեմբերի №-ը լոյս կը տեսնի աւտոյս 26-ին ճիշտ այն օրը, երբ XXV տարի սրանից առաջ 1883 թ. լոյս տեսաւ ԱՂԲԻՒՐԻ № I.

ԱՂԲԻՒՐԻ հանդուցեալ աշխատակիցների յիշատակին՝ Վեհափառ ՀՈՒՅՍ ՀՈՒՅՐԿԻ, Պետրոս Ադամեանի, Թամառա Ադասեանի, Ալեքսանդր Առաքսեանի, Բարկափ Հայրապետ Բարսեղեանի, Սարգիս Ե. Բէգ-Նազարեանի, Ալեքսանդր Երիցեանի, Մակար Էկմալեանի, Բրիսագոր Թադէոսեանի, Յարութիւն Վարագեօզեանի, Ծերենցի, Սիմէօն Հախումեանի, Մուշեղ Մամիկոնեանի, Կարրիէլ Միրզոյեանի, Բրիսագոր Միքայէլեանի, Նկարիչ Ստեփանոս Ներսիսեանի, Թագուհի Շիրմանեան, Մելիք-Ադամեանցի, Պերճ Պռօշեանցի, Նիկոլայ Ալեքսանդրովիչ Սօլսիե, Ս. Վարդիբեան, Նէմիլօթի, Արիստակէս արեպիսկոպոս Սեդրակեանի, Նազարիա Տէր-Մարկոսեան—Միրզոյեանի, Նազարիա Տէր-Յովհաննիսեանի, Իշխանուհի Մարիամ Զիրախեան-Բէգ-բարխգեանի, *Բաճճու Տպարանապետ Յովհաննէս Յ. Մարտիրոսեանցի, գրաշարապետ Սանդրօի, Յովսէփ Էլչիանի, (գեղարուեստական) Կարապետ Սազանդարեանի, Ասլան Դովլաթեանի, Բագրատ Աւետիսեանի, Մխօ Մղեռեան, Բիճիկեաննե՛րի՝ Ալէքսանդր և Կոռատ և մեր տպարանական այն բանուորների ու աշխատաւորների, որոնք անցել են յաւիտենականութեան վիրկը, ուրբաթ, յունւարի 25-ին երեկոյեան 6 ժամին Վրացական-Վեղագիտական Սալօնում կը կատարւի հանդիսաւոր հոգեհանգիստ Աշխատակիցներ՝ ա. ա. և պ. պ. Ղ. Ագայեանց, իշխանուհի Ս. Արղութեան-Երկայնաբազուկ (Սօւասիլնա) Armena, Մաթ. Ագայեան, Մուշ. Ագայեան, Ա. Աբրահամեան, Աստղիկ, Ա. Ահարոնեան, Ն. Աբելեան, Ալ. Աբելեան, Յ. Աբելեան, Ալիսաեակ Աշ. Աթանասեան, Յ. Աթայեան, Յ. Ագաթաբեան, Ամման, Գ. Աստուածատրեան, Սաթ. Արաեւեան, Հ. Առաքելեան, Բժշ. Բ. Ապասարեան, Բժշ. Կ. Աղաջանեան, Բժշ. Վ. Արծրունի, Գ. Ալթանեան, Ա. Բաբախանեան (Լէօ), Սոփ. Բաբայեան, Բժշ. Ա. Բաբայեան, Ա.-ք. Բագրատունի, Զ. Բալասեան, Ֆլօրա Բալասանեան-Ստեփանեան, Ա. Բաբայեան, Գ. Բաշինջաղեան, Գ. Գաֆիան, Մ. Գաֆիան, Դր. Բալասանեան, Բարգուլիմէոս եպիսկոպոս, Բենիկ վարդապետ, Գ. Բարխուդարեան, Դ. Դէմիրճեան, Սրբ. Երիցեան, Գ. Ենգիբարեան, Ա. Եղիազարեան, Ա. Եչիկեան, Բժշ. Թ. Զաքարեան, Յ. Զոհրաբեան, Ա. Զոհրաբեան, Ս. Թառայեան, Յար. Թումանեան, Յով. Թումանեան, Արշ. Թումանեան, Վ. Թումանեան, Հ. Թոփչեան, Ե. Թոփչեան, Իշխ. Մ. Թումանեան, Աւ. Իսահակեան, Բ. Իշխանեանց, Յ. Իւզբաշեանց, Ս. Լիսիցեան, Ատժակ, Յ. Խօջամիրեանց, Ա. Խնկոյեան, Ս. Ծատուրեան, Նկարիչ Ն. Ն. Կարապին, Կոռ. Մ. Կոռատեանց, Յ. Կոռատեանց, Աբ. Կրասիլնիկեան, Կ. Կրասիլնիկեան, Յով. Կարապետեան, Կոմիտաս վարդապետ, Շուշ. Կուրզինեան, Յ. Ղազարեան, Յ. ք. Ճուղուրեան, Արշ. Մեհրաբեան (Սրինգ), Ս. Մանդինեան, Ա. ք. Մինասեան, Գ. ք. Մկրտումեան, Մ. Մանուչարեան, Իս. Մարկոսեան, Եղ. Մատթեան, Կ. Մարտիրոսեան, Հ. Մարտիրոսեան, (Հայկանուշ), Լ. Մանուելեան, Գ. Մոճուեան, Յ. Մալխասեան, Վ. Միրաքեան (Միր-Կօնս) Լ. Մարկոսեան (Լէօնիդ), Լ. Մելիք-Ադամեան, Մ. Յարութիւնեան, Արշ. Յարութիւնեան, Իս. Յարութիւնեան, Յարոյ, Յուսիկ արքեպիսկոպոս (Հասս) Յ. Յակոբեան, Յ. Յովհաննիսեան, Բ.Վիշապ. Բ. Նաւասարդեան, Հ. Նաւասարդեան, Տ. Նաւասարդեան, Նար-Դոս, Ա. Նազարբէգ (Լեւոնց) Դր. Նիկողոսեան, Ան. Նազարեան-Բուզպաշեան, Շիրվանզադէ, Շանթ, Բժշ. Ա. Շիսեան, Ս. Շիսեան, Ե. Շահ-Ազիզ, Վ. Շահպարոնեան, Ա. Շահպազեան, Գ. Զմշկեան, Մ. Զմշկեան, Չիլինգարեան, Յ. ք. Պետրոսեան, Վ. Պետրոսեան, Պերճանուշ Պռօշեան-Տիգրանեան, Ե. Պալեան, Յար. Պետրոսեան, Դ. Պապիկեան, Կ. Ջալալեան, Մ. Վօրօբիևա, Տ. Ռաշմաճեան, Մար. Սերեբրիակեան, Յ. Սոլովեան, Ս. Սափարեան, Ա. Սարգարեան-Արեւշատեան, Սէյլան, Նէյլի, Ե. Սուքիասեան, Ա. Սրմէօնեան, Փ. Վարդանեան, Ն. Վ. Տէր-Աւետիքեան, Զ. Տէր-Գրիգորեան (Զաւախեցի) Ե. Տէր-Գրիգորեան (Տիկին Բիւրեղ) Ա. Տէր-Բալդասարեան (Արշարունի) Ի. Բաշինկի, Ան. Աբշակ Բաֆֆի, Վ. Փափազեան, Ալ. Քիշմիշեան, Ա. Քիշմիշ., Տ.-Գրիգորեան, Ա. Քալանթար, Ս. Քամալեան, Lucy Oudretsch, Ռ. Օհանջանեան, Տատիշվիլի (Թիֆլիս), Ֆէերօ, նոյնպէս ՏԱՐԱԶԻ աշխատակիցներն ու թղթակիցները և ԱՂԲԻՒՐԻ ու ՏԱՐԱԶԻ տպարանական բանւորներն ու բաժանորդները այսու հրաւիրւում են շնորհ բերել Բուսական-Վեղագիտական Սալօնը, նոյն օրը, ուրբաթ, յունւարի 25-ին երեկոյեան 6 ժամին։

ԲԱՑԱՐՁԱԿ ՆԱՄԱԿՆԵՐ

XXVIII

Գաղափարներից վանմադոյնը ազատութիան գաղափարն է. սակայն կուսական անտառներում գիշատիչ անասուններն էլ են ազատ։

Ազատ լինել չէ կարող նա, որ դեռ խաւարի մէջ է և չի ճաշակել գեղեցկի և լոյս-ճշմարտութեան բաժակը։

Մտաերհալիտական գաղափարը յոսի ուղեցոյց է ազատութեան հասնելու համար։ Եթէ այդ ճանապարհը հաստատ լինէը, էլ ինչո՞ւ է հրէկւայ նեւթապէս ազատը այսօր սարկացած...

Մենք կը շարունակենք մեր ճանապարհը լուսաւորած ճշմարիտ գիտութեամբ ու կը ցանկանանք, որ մեր ընթերցողները հաւատան այս հրեշտակին, որ իր մանկան հրապուրում է ոչ թէ շաքարհացով և պսպղուն խաղալիքներով, այլ հորիզոնի վրայ փայլող լուսի ճաճանչներով, որ թափւում են այն գաւաթը, որից իր ծարաւը պիտի յագեցնէ մանուկը։

Սակայն գաւաթին կարելի է հասնել, երբ միայն պատանդան գրքերի ատիճաններով անցնէ մանուկը...



ԿԵԱՆՔԻ ՆԱԻԸ

Տատապանքի սև կնիքը դէմքիս
Կեանքի սանդուղքով ես վեր եմ թռչում
Եւ ինձանից ցած... սոսկում է հոգիս,
Իմ ոտքերի տակ ծովն է շառաչում։

Կատարի ալիք վիշապների պէս
Սողում են ծովում՝ անծայր, փրփրագէպ։
Եւ կեանքի նաւը լողում է, լողում
Ալեկոծ կեանքի կատարի ծովում։

Երերուն նաւակ, արկեաք, բախտը քեզ
Ինչ է սահմանել. դու պէտք է փրկւես,
Յաղթելով ծովի կատարի ալեաց,
Թէ ընկճւելով պիտ կորչես անդարձ...

Յարութիւն Պետրոսեան

ՀԵՔԻԱԹ

Մի ասիական ազգ, որ դարերի ընթացքում աստիճանաբար թուլացել փոքրացել էր և որ ոչընչանալու մօտ էր, ունէը երկու հատ լրագիր «Ծամաքոր» և «Ծով» վերնագրով։

Նրանց խմբագիրները տարբեր ուղղութեան տէր մարդիկ էին։ Երկուսն էլ ծառայում էին ազգին, երկուսն էլ աշխատում էին ցոյց տալ իր ժողովուրդին ուղիղ ճանապարհ դէպի ճշմարիտ, ազնիւ, գեղեցիկ և բարի ճանապարհը։

Նրանց նպատակն էր աշխատել անվերջ անձնուիրաբար, որպէսզի սիրելի ազգը ազատեն կորստից։

Այդ խմբագիրները շարունակ վիճում էին իրար հետ։ Գրում էին միմեանց դէմ յարձակողական և հայհոյական յօդուածներ։

«Ծամաքոր»-ը հաւատացնում էր իր ընթերցողներին, որ «Ծովի» քարոզածը սխալ է, կեղծ է, սուտ է. հետևապէս կորստաբեր է ազգի համար։

«Ծով-ը» երդւում էր բոլոր սուրբերի անունով, որ «Ծամաքոր» ուղղութիւնն ու հայացքները միանգամայն ազգակործան են։

Նրանցից ամէն մէկը պնդում էր, որ միմիայն ինքն է, որ ազնւաբար ձգտում է հանել իր ազգակիցներին խաւարից և ցոյց տալ լոյսի ազբիւր։

Եւ այսպէս թէ և այս խմբագիրները զանազան խելքի և հայացքների տէր անձինք էին, թէև իրար թշնամի էին։ սակայն նրանց նպատակը մի և նոյնն էր։ Նրանց միակ անզուսպ ցանկութիւնն էր տեսնել ազգը բախտաւոր, երջանիկ և անկումից աղատւած։

Բայց մի օր յայտնւեց որ «Ծամաքոր» խմբագիրը խելագարւել է և մեծ ցաւ իր կողմնակիցների ու կուսակիցների։

Խելագարելու պատճառը եղել էր մի սարսափելի երազ։ Նա երազում տեսել էր իր ազգը անկախ, փառաւոր, հզոր բայց դժբաղդաբար այդ երազի զրութիւնը հասել էր «Ծովի» խմբագրի ձեռքով։

Գ. ԲԱՇԻՆՋԱՂԵԱՆ

Ա Ր Ա Գ Ա Ծ Ո Տ

(Նոր պատմություն)

ԶԱՍՏ ՎԵՐԻ ԼՈՌՑՅՈՒ

Ի

նչ պիտի էր ասեր. իսկ ոչինչ էլ չասաց։ Ինչպես ամեն անգամ, երբ ուզում էր ինչ-որ բան ասել, նա միայն ժպտաց։ Ժպտաց ու ոչինչ



ՍՄԲԱՏ ՇԱՀ-ԱԶԻԶ

Անցեալ դեկտ. 25-ին Մոսկվայում վախճանուեց և 30-ին Մոսկվայի հայ հասարակութիւնը հանդիսաւոր շուքով Մեծ Բանասեղծի աճիւնը ամփոփեց Մանփանոս Նաղարեանի գերեզմանի կողքին։

Մխթարեան դեկտ. 27-ին հեռագիրն ուղարկեց Մոսկվայ Թաղման կարգադրիչ յանձնաժողովին։

Սիրոյ, Ազատութեան վշտահար երգչի՝ Ս. Շահ-Ազիզի երկինք սաւառնալը կակծեցնում են Ազբիւրին և Տարագին, որ ծնկաչոք մրմնջում են ե-

Սաթենիկ Զմշկեան եւ Սիմ. Հախումեան

Դ. Սունդուկեանի «ՊԷՊՕ» կոմեդիայում

կնքին աղօթք՝ Ազնիւ ընկերի հոգինակի նուիրական կտակը յաւէտ մնայ։

Պահի փոխարէն 150 ր. ազգային պատկերներ յանձնուեց Ներսիսեան դպրանոցին այսօր չքաւոր աշակերտների օգտին կայանալիք վիճակախաղի համար։

Տարագի մօտակայ հաւարներից մէկը և Գրական Գեղագիտական Սալոնի մի ժողով կը նուիրուեն վշտի մեծ երգիչ Ս. Շահ-Ազիզի յիշատակին։

Պ. Մ. Բարխուդարեանին խնդրում ենք Ազբիւրի և Տարագի ներկայացուցիչ լինել Ս. Շահ-Ազիզի Թաղման։

ՍԱԹԵՆԻԿ ԶՄՇԿԵԱՆ

Երկարատև հիւանդութիւնից յետոյ դեկտեմբ. 24-ին Թիֆլիսում վախճանուեց հայ Թատրոնի անդրանիկ դերասանուհի Սաթենիկ Զմշկեան 56 տարեկան հասակում։

Հանգուցեալը հայ Թատրոնի վեհերան Դէորգ Զմշկեանի ամուսինն է. այս պոյտը հազարեա քաջառողջ տարի իրանց ուսերի վրայ պահպանել է հայ Թատրոնը, ուստի այսօր մի քանի տողով անհնար է մեզ նոյնիսկ թռուցիկ թուել այս անխոնջ պոյտի գործունէութիւնը։

Թաղումը կատարուեց հանդիսաւոր, կիրակի, դեկտ. 30-ին։ Յուղարկաւորութեան ներկայ էին Թատրոն., պրակտ., ժամուլի անդամները և յարգողների խոռն բազմութիւն։ Բնակարանից դագաղն իրենց ուսերի վրայ դուրս բերին Դրամ. Ընկ. Վարչութեան անդամները և դերասանները։ Պատարագից յետոյ Մոլոնու եկեղեցու գաւթում՝ Բազէի Կուլտուրական Միութեան ներկայացուցիչ Գ. Երիցեանը ողբաց անդրանիկ դերասանուհու մահը և նոյն Միութեան կողմից դրեց մի պսակ։ Ա. Վրոյրը նկարագրեց այն փշոտ միջավայրն ու հանգամանքները, որոնց մէջ երևան եկաւ Ս. Զմշկեանը, որպէս դերասանուհի և շեշտեց նրա մատուցած անգին ծառայութիւնները հայ բեմին։ Դրամատիկ. Ընկ. Վարչութեան և Դերասանական Ընկերակ. կողմից Ա. Յարութիւնեանը ասաց՝ «Մի քանի օր առաջ շքեղ Թատրոնի մէջ տօնում էինք մեր ընկերոջ 25-ամ. այսօր պայծառ ու բայ երկնակամարի տակ ողբում ենք ու վերջին հրաժեշտի ողջոյնն ենք տալիս մի այլ ընկերոջ։ Թէև հանգամանքներն ու միջավայրը բոլորովին այլ են, բայց յարգանքի և երախտագիտութեան տեսակէտից հաւասար։ Այսօր մենք եկել ենք մեր խորին երախտագիտութիւնը յայտնելու և մեր գլուխը խոնարհեցնելու մի հայ կնոջ գագաղի առաջ, որ 30 տարուց աւելի անձնուիրաբար ծառայել է հայ բեմի բարգաւաճման սրբազան գործին, որ պատերազմել է իր ժամանակի նախապաշարումների դէմ, և եթէ այսօր հայ բեմը կանգուն է, մենք այդ շատ բաներով պարտական ենք Սաթենիկ Զմշկեանին։ Եւ որպէս այդպիսին, Ս. Զմշկեանի անունը անմեռ կը լինի, քանի գոյութիւն կունենայ հայ Թատրոնը»։

Դերեզմանի վրայ խօսեցին Մ. Զմշկեան և դերասան Արմենեանը, որ ասեց ժամատրաստէս հետեւեալը. «Մայրիկ, որովհետև դու մեր ամենքի մայրիկն էիր—դու պնացիր քո նուիրական պարտքը կատարելով և մեզ Թողեցիր մի կտակ. «երբէք չը ծերանալ» — որովհետև դու երբէք չը ծերացար. «երբէք չը յոգնել, չը վհատուել»—որովհետև դու երբէք չը յոգնեցիր, երբէք չը վհատեցիր։ Հանգիստ քնիր, մենք կը պահենք քո կտակը՝ նուիրական, ինչպէս քո յիշատակը»։

Օր. Քնարիկ. դերասանուհի դեկ. 25 ին Բաքուում Թոյն ընդունելով մեռաւ և դեկտ. 30 ին :ԹԾ շուրով այնտեղ Թաղուեց։

ՍԻՄԷՕՆ ՀԱԽՈՒՄԵԱՆԻ ԳԵՐԵԶՄԱՆԸ

Ամենրից մօտացած պրակտիկա, հրապարակախօս և ուսուցիչ Սիմէօն Հախումեանի դերեզմանին Պարիզի արուարձաններից մէկում կանգնեցուած է յուշարձան և քանդարուեր հրապարակախօս-գրաքաղպի գրուածքներից ԾԱՂԿԱԲԱՂ մի ժողովածու է հրատարակուելու։ Այդու հրաւիրում են վաղամեռ հրապարակախոսի յիշատակը յարգողները իրանց դրամական մասնակցութեամբ հնարաւորութիւն տալ փութով իրագործելու և ԾԱՂԿԱԲԱՂԻ հրատարակութիւնը։

Հասցէն ՄԱՄՄԱԻԼԻ ԱՆՏՈՆՈ

Typ. Бюро Печати Мадатовская, 5

Կ. ՊՕԼՄԻ ԻՊՊՕԴՐՈՄԸ.

Կոստանդնուպոլսոյ VI րդ դարու սկզբից արդէն խլել էր Հռոմի փառքը։ Քաղաքի գեղեցկութիւնն ու փարթամութիւնն իր դազաթնակէտին էր հասել։ Կողոպտուած էին Եւրոպան և Ասիան ու տիեզերքի ամենագեղեցիկն ու ամենաճոխը բերում էր երկու մայր ցամաքների և ծովերի մէջ տեղ ընկած Կ. Պոլիսը։

Մայրաքաղաքի աչքի ընկնող հրաշալիքներից մէկն էլ կրկէսը, Իպպոդրոմն էր՝ կայսրների զբոսնքեան յիշատակը, զարմանութիւնների կենտրոնատեղին, որ հովանաւորում էր մարմարեայ պալատներում բնակւողներից։

Կրկէսն այն ժամանակ ունէր հասարակական հիմնարկութիւնների բոլոր յարմարութիւնները և Բիւզանդական կեանքի կենտրոնն էր։ Ժողովուրդը բաժանուած էր այնքան կուսակցութիւնների, որքան գոյներ կային և ձիարշաւի խմբակները միմեանց հետ մրցում էին ոչ միայն իրանց ձիերի յաղթանակով, այլև հասարակական հարցերով։

Այստեղ էին կազմւում յուցահանդէսները ու

Սմբատ Շահ-Ազիզ

† *Մոսկվայ 25 դեկտ. 1907 թ.*

պարահանդէսները։ Ընդիշները մենամարտում էին, եպիսկոպոսից եկած կախարդները հմայում, ժեհը երդմնցնում։ Վաճառւում էին տորուկներն ու քաղքենիները։ Հնդիկ, չին, պարսիկ, չերքէզ, իտալացի, յոյն վաճառականները այստեղ էին հալեցնում իրանց երկրի ընտիր արտադրութիւնները։

Հռոմը Կ. Պոլսի մէջ չէր նշան իր նախնութեան վճարից։ Պոլսի այս կրկէսին յիսուն դեղեցիկ կոթողներ, որի ընդարձակ տարածութիւնը զարդարած էր աստուածների, հերոսների, կայսրների, քուրմերի, տաճարամարտիկների արձաններով։ Գահը իպոդրոմի մէջտեղը շինուած էր գրանիտից և զարդարած ամենանշանաւոր մարգարիտներով ու գոհարներով։ Ոսկին, արծաթը, մարմարն ու մօզաիկը, ակնեղէնները շղարշը, մետաքսը, գորգերը մրցում էին միմեանց հետ։ Բնութիւնը մի կողմից, գիտութիւնն ու արուեստը միւս կողմից արել էին ամեն ինչ, հայելու աշխարհին։

Սակայն հռոմայեցիների նման Բիւզանդիոնն էլ կործանուեց, որովհետև անարդարութիւնը, խարդախութիւնն ու զեղծութիւնն էր իշխում և այնտեղ։

Ներսիսեան Ազգային Դպրոցը Թիֆլիսում

Ներսիսեանցիների՝ գոյութեան քնթացքում առաջին անգամ հարիւրերորդ եղու տարեթիւ դեկտ. 27-ին Աբտիսա. Ընկ. դահլիճներում տարահանդէս և վիճակախաղ իր չքաւոր սանների օգտին։



Կատաճատիճացօլսի խօդրոմը (կրկէսը) VI դարում.

ԱՐՈՋԱ

Fantazie իրականութիւնից

Հինգ արարուածով եւ 7 պատկերով

(Նէբը արիւնաթաւալ, մոխիր ու անծուխ դարձած, երբեմն հոյակապ իմ աննման ծննդավայրը Շուշուն)

Անցքը սկսւում է ռուս-տաճկական պատերազմից յետոյ և իրականանում ռուս ճապոնական պատերազմը վերջանալուց... տարի յետոյ։

—

I գործողութիւնը կատարւում է Շուշում, II եւ III գործողութիւններ—Թիֆլիսում, IV եւ V գործողութիւններ—աէռոստահմանում։

(Սկիզբը ԴԵՂԱՓՆՋԻԿ №№ 1–4

ՆՐԿՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾ

(Հայկանուշը նագում՝ է կանգնած, կուռցած դաշնակին, կիս ածայն Կարնեվիլեան զանգեր օպերէտից. «Նայիր այստեղ, նայիր այնտեղ...»

Մ՝ալազը նախադռնով մտնում է Մարտի-ապօրն ուղեկցելով, որի ձեռին փուրաշկա. Հայկանուշը նրա առաջն է գնում, ձեռը սեղմելով։

Հայկանուշ. *Մարտի-ապեր, բարև։ Բարիկենդանը ձեզ էլ է բերել Թիֆլիս։ Համեցէք խնդրեմ։ Սալօմէ Անդրէեւնա, մեր Բագւայ կրեսոսը, Մարտին Պետրովիչ։ Մեր Ղարաբաղի պլոցի նախկին ամենապատուաւոր հոգաբարձուն, աշակերտուհիներիս պաշտպանը, նորին գերազանցութիւնը։ Մի ղարաբաղցի չէք կարող գտնել, որ Մարտին Պետրովիչին ճանաչելիս չը լինի, միայն Մարտի-ապեր ասացէք, Մարտին Պետրովիչ Բագուում։ (Ձեռք է տալիս Մարտի-ապերը Սալօմէին, Հայկանուշը ձեռքով համեցէք է անում. նստում են։ Մալագը քրքիջը չի կարողանում պահել)։*

Մալագ. *(Մի կողմ դէպի հանդիսականները) Վարդուհին, ակին գալու են նեղանան, ախր սա ինչ փեսացու է, որ մասխարա է անում Սալօմէ Անդրէեւնին։*

Սալօմէ. *Շատ ուրախ իմ, վուր ծանօթանում իմ ձեզ հետ։ Ձեր Բագւի մասին էնքան բաներ ին պատմում, վուր «Հազար ու մի գիշերւայ» պատմութենուն էլ չըկայ, ով գիդէ։*

Մարտի-ապեր. *Բագուն մեր դրախտ Ղարաբաղը հնձից տարաւ։ Դուք, Ղարաբաղ չէք եղել, օրիորդ։*

Սալօմէ. *Վունչ էլ Բագու։ Աստւում ին շատ ինտերեսնի է Բագուն, Բալախանու ֆանտաններըը. հմ։*

Հայկանուշ. *Աստուծով կը գնաք, կը բնակւէք, կը տեսնէք։ Մարտի-ապեր, ինչ կասէք, եկէք այս բարիկենդանին մի հարսանիք ուտենք. հը՞... Սալօմէ Անդրէեւնա (ականջին փսփսալով)։*

Սալօմէ. *Ախպէրս շատ ուշացաւ, Օզալիա Սերգէեւնան էլ չեկաւ։*

Հայկանուշ. *Օ՜, այժմս Օզը եօթներորդ երկնքումն է (կլասիկ ոճով)։ Հայոց ազգի անձնւէրը պաշտպաններ, փառաց ի փառս և քարացեալ էնօք, եղիայ։ (Երգում է շարական, ծաղրաբար, ապա դաշնակի առաջ նստում)։ Մալագ, Աստւած սիրես, մի պարիր։ (Մալագը փախչում է դէպի սեղանատան դուռը եւ կանդնում։ Հայկանուշը հետևից գնում է եւ ետ դառնում)։*

Սալօմէ. *Քանի ժուգ է, վուր Բագու իր, Մարտին Պետրովիչ։*

Հայկանուշ. *Քսան հինգ տարի. քսանհինգամեակը պիտի կատարենք, պսակելով մեր ծերունազարդ յոդնավաստակ երիտասարդին։ (Դէպի Սալօմէն) Այդպէս մի նայէք նորին գերազանցութեան (Մարտի ապօր ձեռներից բռնում է եւ Քոչկոտելով երգում)։*

«Սարի լանջն է մահճակալս, ուխայ-ուխայ ինչ փափուկ է»։

Ա՛խ, ինչ օրեր էին .. Մարտի-ապեր։ Հը՛, ինչ կասէք երիտասարդ զոյգ, հաժաձայն է՞ք պսակւելու, Մալագ, զանգը տուին։ Տես, եթէ Օզն է, թէ Մարիամ բալջին չը բերես այստեղ։ Տար սեղանատունը, ես կը գամ։

Սալօմէ. *Ինչի՞ ինչի՞։*

Հայկանուշ. *Չէ՞ք հաւանում.*

Սալօմէ. *(կիսածայն) Խիստ բարի է երեւում։*

Հայկանուշ. *Սպասեցէք, կը պաշտէք, ոչ թէ կը հաւանէք։*

Սալօմէ. (կիսածայն) *Իս համաձայն իմ։*

—

(Մ՝տնում են երկու զիմնազիստ եւ մի ուսանողուհի Մալագի ուղեկցութեամբ)։

Ուսանող Ա. *Օզալիա Սերգէեւնան եթէ շուտով կը գայ, մենք կը սպասենք։*

Հայկանուշ. *Չե՞մ կարող փոխարինել, համեցէք, (նստում է եւ նրանց իր կողքին նստացնում. Սալօմէն ու Մարտի-ապերը խօսում են, Մալագը գնում է)։*

Ուսանող Բ. *Մենք եկել ենք Օզալիա Սէրգէեւնին խնդրելու, երեկոյթ ունինք երկու աշակերտի օգտի, որպէսզի երգէ մեր երեկոյթում և տոմսակ ենք բերել իր շրջանում տարածելու։*

Հայկանուշ. *Տոմսակները տէք ինձ, իսկ երգելը չը գիտեմ։*

Ուսանողուհի. *(տալո) տոմսակները), ահա տասը րուբլու տոմսակ։*

Հայկանուշ. *Այդ քիչ է. եթէ բոլոր չերգէ մի-քէ տոմսակները չեն վաճառւիլ։*

Ուսանող. Ա. *Ներեցէք օրիորդ եթէ Թոյլ կը տաք ես իմ մօտի տոմսակներս էլ կը թողամ։*

Հայկանուշ. (կանչում է) *Մալագ,* (մտնում է Մալագը։ Իսկ ուսանողները հաշւում են տոմսերը)։ *Տէէք խընդրեմ, ձեր ունեցած բոլոր տոմսերը, տէք։ Քանի ժանէքի են։ Մալագ։*

Ուսանող. Բ. *(հաշւելով) 47 մանէք։*

Հայկանուշ. *Ձէ՞ք Թոյլ տալ, որ ձեր երեկոյթում ես էլ մասնակցէի։*

Ուսանողներ. *(միաբերան) Օ, օրիորդ, մեծ ուրախութեամբ։ Խնդրում ենք։ Ահա պրօգրամը բերել ենք, որ Օզալիա Գրիգորևնան իր համաձայնութիւնը տալուց, որպէս իր ուղածը և տանենք այստեղից տպարան։ (Տալիս են նրան ձեռագիրը)։*

Հայկանուշ. *Մարտին Պետրովիչ, այդքան երկար չի կարելի ղբաղեցնել Սալօմէ Անդրէեւնին, խնդրեմ մեզ մօտ եկէք։* (Բռնում է Մարտի ապօր ձեռից եւ ականջին փսփսում)։

Մալագ. *Գնդէ՞ք ունիք ինձ հետ։*

Հայկանուշ. *Ինչպէս չէ... կամ լաւ. գնա մեզ բոլորիս շոկոլադ եթէ պատրաստ է բեր։* (Մալագը կամենում է դուրս գնալ) *Ձէ,չէ,Թող սեղանատանը, մենք իսկոյն կը գանք այնտեղ։ Թէ չէ, Վարդուհին էլի կասէ որ անկարգութիւններ ենք անում։* (Մալագը դուրս է գնում)։

—

Սալօմէ. *Ո՞ւմ համար է այդ վէչերը։*

Հայկանուշ. *Միևնոյն չէ՞, ում օգտի էլ որ լինի։ Ահա ձեզ տոմսակներ, խնդրեմ Մարտին Պետրովիչի կողմից ընդունէք և հրաւիրէք ձեր ընկերուհիներին։* (Դառնալով դէպի Մարտին Պետրովիչը) *Լաւ, լաւ, շատ ծախսի տակ չեմ դնի ձեզ այսօր, միայն հարիւր րուբլի։ Բաւական է պարոններ,* (դառնալով աշակերտներին) *Թէ՞ աւելի տանեմ։ Իմացէք, Մարտին Պետրովիչը հարուստ է, ամսական տասնհինգհազար րուբլի բարեգործութիւնների համար է յատկացրել։ Մ՛իթէ այդ չը դիտէք, զաւակներս։ (Ուսանողները ուրախ դլուխ են տալիս Մարտի-ապօրը եւ ձեռը տալիս)։*

Սալօմէ. *Տոմսակները ձեռին) Շնորհակալ եմ. ինչ նեղութիւն է. (Դառնալով ուսանողներին) վռւրդի, պիտի ըլի վէչերը։*

Ուսանողներ. *Ուրբաթ օրը ժողովարանում, եթէ տոմսակների կէսը ծախւի։*

Հայկանուշ. *Իսկ եթէ չը՝ ծախւի։*

Ուսանողներ. *Ժողովարանի դահլիճի ու ժուզիկի վարձը սկզբից պէտք է վճարւի։*

Հայկանուշ. (կանչում է) *Մալագ,* (դնում է սեղանատունը)։

—

Ուսանողներ. *(դառնալով դէպի Սալօմէն) Ներեցէք, ո՞վ է այս օրիորդը։*

Սալօմէ. *Օրիորդ չէ, սիկին է Բագւից, շատ հարուստ ու բարեգործ, Օզալի Սերգէյևնի դէդիի աղջիկն է։*

—

Հայկանուշ. *(մտնելով շտապ) Ահա ձեզ բարեկամներս, Մարտին Պետրովիչի վերցրած տոմսակների համար հարիւր րուբլի և այս հարիւրն էլ իմ կողմից։ Տոսակներն էլ ձեր ընկերների ծնողներին բաժանեցէք և հրաւիրեցէք։*

Ուսանողներ. *(միաբերան) Շատ շնորհակալ ենք, տիկին, մեզ չափազանց պարտաւորացրիք։*

Հայկանուշ. *Սպասեցէք, սպասեցէք. ես կաժնում եմ ձեր պրօգրամը հիմնովին յեղաշրջել. Ինչ կասէք։ Թոյլ կը տա՞ք։*

Ուսանողներ. *(Միաբերան) Խնդրում ենք, խընդրում ենք, ինչպէս կամենաք։*

Հայկանուշ. *(Նրանց մօտ՝ըից բռնելով եւ դէպի պրասեղանը տանելով) Նախ և առաջ ոչ մի եղեռնական երգ։ Բօզը կը երգէ Սևիլեան Սափրիչից և Կարմէնից։*

Ուսանող Ի. *Իսկ դուք, սիկին, կերգէք, Թէ կը նւագէք։*

Հայկանուշ. *Ես կարաւանեմ մի բանաստեղծութիւն։ Անունս պրօգրամի մէջ մի ասողանիլ դրէք։ (Կամ՝կաթար) Չէ, չէ, մի ասողը քիչ է. չէր կարելի մի արև գնել։*

Ուսանող. *(Միամտաբար) Արևի նշա՞ն։ (Զարմացած)։*

Մարդի-Ապեր. *Զարչամբա դրեցէք։*

Ուսանող. Բ. *Ի՞նչ է նշանակում այդ։*

Սալօմէ. *Նու, մէ ասողը քիչ է, երեք աստղ դրէք։*

Ուսանող. Ա. *Ի՞նչ պիտի արտասանէք, ըստ այնմ ընտրենք։ (Մտնում է Մալագը)։*

—

Մալագ։ *Համեցէք, շոկոլադը պատրաստ է։*

Հայկանուշ. *Չէ, կը սպասենք, մինչև կը գան։ Մենք այստեղ դեռ սարսափելի խորհրդակցութեամբ ենք զբաղած։ (Մալագը դուրս է գնում)։ Լաւ սպիտակ մի կէտ դրէք չանիոր արևը չի կարելի։ Ահնքը ծիծաղում են)։*

—

Հայկանուշ *(Մտախոհ, բանելով ուսանողի եւ ուսանողուհու ծնոները) Ունայնութիւն ունայնութեանց։ Եթէ ինձ հալցնէք, բարեկամներս, աւելի ճիշտը կը լինէր, որ աշխարհումս ոչ մի անուն չը լինէր և մարդիկ այնքան միմեանց նման լինէին թէ կերպարանքով, թէ հասկացողութեամբ, որ այլևս հարկ չը լինէր ասողերով, արեգներով կամ մեծ-մեծ անուններով երևալու։*

Սալօմէ. *Էն վուխան էլ ինչի ջ՞ր պէտք փուղը, հագուստը...*

Հայկանուշ. *Ո՞վ է ասում թէ փողի կարիք կայ։ Ոչ միայն փողի չը կայ պէտք այլ անհրաժեշտ է, որ չը լինի և հռչակ, անուն։ Ի՞նչով է պակաս և ինչով մեղաւոր այն աղքատի զաւակը, որ ոչ միայն ուսման փող չունի, այլ և ուտելու գաւաթ հաց։ Եւ վաղը նա կամ կառավարիչը պիտի աւլէ և մի օր այնտեղից բակն ընկնի, կուռը, ոսը կոտրի, վերջն էլ մուլայիկների շարքն ընկնի, կամ հէնց մանկութիւնից մի սրիկայ պիտի լինի։ Իսկ ապուշ հարուստի տխմար, փթամիտ տղան, (Դառնալով դէպի Մարտի ապերը, կոմիկաբար) նկերեցէք Մարտին Պետրովիչ և դուք, Սալօմէ Սեմիոնովնա, ձեր հաշւին չընդունէք...*

Մարտիապեր. *Ա չարչամբա, ախր դէ խրէկ մասխարա գդի խալխին է։*

Հայկանուշ. *(Ուշադրութիւն չը դարձնելով)։ Հազ՛ր ու մի բարեգործութիւնների դիմակների շնորհիւ Թէ դպրոցներ է փայլուն աւարտում, Թէ համալսարաններ, ապա չազ հարմացուցել։*

Սալօմէ. *Շատ դրուստ իր հրամանք անում Այկանուշա Պաւլովնա, չազ հարմացու։ Դանա հարցնում են Թէ ձվ է, ձւի աղջիկը, ձվ է էլի նրա հէրը—մի խարազ Թէ մի կալատուզ։*

Հայկանուշ. *(Ընդհատելով եւ մասամբ արհամարանքով դէպի Սալօմէն) Ո՛չ, բարեկամներս, այդ տեսակ երեկոյթներով, դռնէ-դուռ ընկնելով Թշւառութիւնը չի վերանալ, մարդկային վիշտը չի փարատւիլ։*

Ուսանող Ա. *Բայց... ինչ անել։*

Մարտի-Ապեր. *Ուսման Թոշակը պէտք է վերացնւի։ Ես երկար տարիներ ականատես եմ, Թէ քանի-քանի հարիւր երեխաներ մի տասը մանէթ չունենալով ուսումնարանում չէին ընդունւում։*

Սալօմէ. *Ա՛յ, իղմայլովը, վուր գլաւա էլաւ, էն վուխան էլ առաց վուր քաղքում պրավուչէնի չըլի, մագրամ ձվ անգամ ղրից։*

Ուսանողուհի. *Մ՛իթէ միայն ուսման վարձն է. դպրոցում Թող արդարութիւն լինի, էն ժամանակ տեղ էլ կը լինի արժանաւորներին ընդունելու։ Իսկ այժմ ով պրատեկցիա ունի...*

Հայկանուշ. *(ընդհատելով) Ուրեմն այսպէս. պրօգրամի մէջ ոչ մի անուն, ջնջենք և Թէ ինչ նպատակի համար է։*

Ուսանողը. Ա. *Այն ժամանակ տոմսակները չեն վաճառւիլ։*

Ուսանողուհի. *Իրրև Թէ, որ նպատակը լինի, բոլորնքանք էլ գլխապատառ վերցնելու են տոմսակները։*

Հայկանուշ. *Ձեր իսկական նպատակն ինչ է, անկեղծ ասացէք, բարեկամներս։ Ձեր երկու դասընկերներին օգնելը, չէ՞։*

Ուսանողներ. *(միաբերան) Ի հարկէ, այո՛.*

Հայկանուշ. *Միմիայն այդ։*

Լ ր ա տ ա ր ա յ ե ր ա զ

Ուսանողներ. Այո՛։

Հայկանուշ. Ես խոստանում եմ ձեզ, որ Մարտին Պետրովիչը մէկին, և միւսին էլ Սալօմէ Սահիանովնան մինչև նրանց բարձրագոյն պլպոց աւարտելն ամսական 50 ր. թոշակ կը տան։

Սալօմե. (Հարցական նայելով Հայկանուշին) Իս վուբ լլէի, անուս դիմ փիչատիլ կատէի, վուբ դիփուռնդն էլ պիտնայիս։

Հայկանուշ. (Ընդհատելով) Առանց եթէհերի. եթէհերը ցանում ես, չէ բռնում։ (Դառնալով դէպի ուսանողները) Իսկ երեկոյթը գարձեալ մենք սարքենք բարեկենդանի առիթով ի Մարտին Պետրովիչի ու Սալօմէ Սահիանովնին հաճոյք պատճառելու համար։ Ուրեմն վճռած է, համաձայն էք։

Ուսանողներ. Այն ժամանակ էլ ինչ կարիք կայ երեկոյթի։

Հայկանուշ. Ո՜, մեծ կարիք. իսկ ֆլիրտի անհրաժեշտութիւնը, բարեզործութիւնների բուն նպատակը մի՞թէ կարելի է դանց առնել։ Ո՛չ, ոչ, երեկոյթն անպատճառ պիտի լինի։ Մի փոքրիկ դահլիճ վարձեցէք. երաժշտութիւն, և բարեկենդանային ֆլիրտ սարքենք, Մարտին Պետրովիչ, ասում են էջմիածնումն էլ այս շարաթ «սբեղտարդ» են անում, ճիշտ է։

Ուսանողներ. Այո՛։

Հայկանուշ. (վերցնում է Մարթի ապօր, քաշ-քաշ անում)։ Օրիորդները հրաւիրում են իրանց կաւալէրներին։ (Պարելով երեք զոյգ մանում է սեղանատուն։ վարդուհին, ընդհատում է, եւ գնալով նրանց հետից)։

—

Վարդուհի. Իսկապէս, ինչ է վիշտը...

Հայկանուշ. (Փրրջալով դրան շէմքում հրում է նրան նորից դահլիճը եւ ձեռքից քարշ տալով տանում դէպի հանդիսականները) Լսիր Բօզ. չը լինի թէ այդ ապուշ Սալօմէին բանաս գաղտնիքը։ Իմացիր որ Մարտիապերը, մեր գպրոցների նախկին հոգաբարձուն է, այժմ Բագուում շատ-շատ հարուստ, նաւթարդիւնաբերող և այլն և այլն։ Մարտին Պետրովիչ, փեսացու։ Այդ խեղկատակ ապջիկը, երեակայիր քեզ հաւատացել է, հաւանել և արդէն սիրահարել։ Նայիր չը փչացնես։ Դէ գնանք. (Քարշ է տալիս վազելով)։

Վարդուհի. Մի՞թէ կարելի է այդպիսի կատակներ անել։

Հայկ սնուց. (Դէպի սեղանատուն Քոչկոտելով կլսակի տմով). Եւ դու իմ ծառուկ, Շուշանիկս տար դէպի Վրաստան...

Վ. Ա. Բ Ա Գ Ո Յ Ր

(Կը շարունակի)

Tiga

Արտիստ Յովհ. Աբելեան

բեմական գործունէութեան XXV-ամեակի առիթով.

Ուսա ող Բ. Իսկ պրօգրամի միւս մասերը։

Հայկանուշ. Բալէտ Չիօկոնդայից՝ «Ժամերի պարը» և ապա մինը կրակոնը (Նստում է դաշնակի տակ նւագում փայտ)։ Դէ խնդրեմ, առանց քաշելու։ Վերցրէք Սալօմէ Սահիանովնին (Դառնալով դէպի Ա. ուսանողը) Դուք էլ ձեր ընկերակցի հետ (Պարում են երկու զոյգ։ Մարթի ապերը մտածել է դաշնակին)։

Հայկանուշ (Նւագելով) Վայ, Վարդուհին ևկաւ չը՞ լինի բացի մեր խաղը։

—

Մտնում են Վարդուհին եւ Մարիամ-քաջին լաւ տրամադրուած։)

Վարդուհի. Ուրախ եմ, որ բացակայութիւնս զգալի չէ եղել։

Սալոմե. Ջեր կուպինան հոգի է էլի։ (Պարերը ընդհատում են)։

Հայկանուշ. Չէ, վարպապա. պրծիր հոգեհանգիստը։

Մարիամ-քաջի. Ափսոս, Մարթի-ապերն էլ պիտի եկած ընէր։

Հայկանուշ. Ի սէր Աստուծոյ, Վարդուհի, նստի մի քիչ ածէ, մենք էլ պարենք։

Վարդուհի. (Նստում է դաշնակի առաջ նւագում մազուրկա)։

—Դեկտ. 24-ին Թիֆլիսում կատարուեց արտիստ Յ. Աբելեանի քառասնամեայ բեմական գործունէութեան փառաւոր յոբելեանը։ Պատ. Թատրոնը լիքն էր մեծ բազմութիւնով։ Ռասց, վրաց, հայոց Թատրոն. երաժշտ. դրական. պլաց. բարեգործ. բոլոր հաստատութիւններն անխտիր դրատախցին յոբելեարին իրանց յատուկ պատգամաւորների միջոցով։



Հեներիխ Զուդեման

Դրական գործունէութեան 50-ամեակի առիթով.

Կային հայարնակ բոլոր վայրերից հեռագրեր և ուղերձներ։

Յոբելեարը շատ վայելուչ իր շնորհակալիքը յայտնեց ամէնքին, խնդրելով հայերից տալ մի յատուկ Թատրոնական շէնքա։

Սակայն ինչ հարկ կայ նոր Թատրոնական շինութեան։ Մինչև աւելի պիւրին չէ հայերի համար իրանց Արտիստիկ. ընկ. բաժնէիպիները յանձնել, նախկին հայ դրամատիկ ընկ. այն պայմանով, որ

Արտիստուհի Լ. Բ. Եաւորսկայա

Թիֆ. Նոր Թատրոնի վեկավար.

նա ժողովարանի մասը յիսուն տարով ձրի տայ Արտիստիկ ընկ., իսկ Թատրոնն ու խանութները շահագործէ դրամատիկ ընկ. հաւար։

Ջէնոր ակսիոներներին մի առանձին նկամութ չէ տալիս այդ շինութիւնը, իսկ այն ժամանակ նրանք կըստանան տոկոս ժողովարանի մասից։

Յոբելեար պ. Յ. Աբելեանին Ազդարից, Տարագից եւ Գրական-Գեղագիտական Ասոցիայից հետեւեալ ուղերձը կարդացինք.

Սօչ-Բուլաղ. Ռուս.-Տաճկ.—Պատերազմի տեսիլքներ.

Մարտի. ամենքն է՞ վտանգի մէջ

Սիրելի Արեւիան, Մեծարելի Յօրելեար, Աղբիւրն ու Տարազը Քեզ չեն մատուցանում գովեստ, ու ոչ էլ ծաղկեայ պսակ։ Մասիսի վրայ չեն բանում գովինները, իսկ Արարատեան աշխարհի հեղհեղուկ մանուշակները, առաքինի շուշաննները, պիտես, որ ոտնակոխ են եղած, նրանց բուրմունքն այլեւս չէ հմայում դիւցազնին...

Ըմբռստ, խիզախ դար է, ասում են նորաբողբոջները, ուրեմն վայել էր, որ Քեզ մեր երկրին հարազատ կաղնիներից հիւսէինք պսակ, բայց կաղնին թէեւ շատ կարծր, ինչպէս Քո կամքը ու կատարեալ համապատասխան արդի սքիներս հային, այնուամենայնիւ, Աղբիւրն ու Տարազը անկարող էին այդ կոպիտ ոյժի վերազանցութիւնը շաղկապելու արեւահիւ հետ։

Չէ որ-ըստ, Մեծարելի Յօրելեար, պատկառելի Քեզանդ հէնց խանձարուրից ճշմարտի և գեղեցկի ուղիով բարձրացար և օր-օրի վրայ արիւն ու մարմին զարձնելով Քեզ այն գաղափարը, որ գեղեցիկը չէ դարող տգեղ լինել, գեղեցիկը տգեղին պատւաստելով քսանհինգ անընդհատ տարիները հզօր պատուանդան դարձրիր արեւահիւ։

Աղբիւրն ու Տարազը մատուցանում են Քեզ այս սրւակ հեղուկը՝ «Izara», որ օրհնւած մի հսկայ աշխարհի գիւթական բերք է։

Վերցրու, և երբ այս փառահեղ տօնդ անցնէ ու Քոյ շարունակես Քո չարքաշ սպասաւորութիւնը մայրենի բեմիդ, իսկ հայն էլ շարունակէ իւրաքանչիւր քայլդ կաշկանդել խարդաւանանքներով, խոչընդոտներով, չը զայրանաս, չը բորբոքւես, այլ մի քանի կաթ այս օրհնւած «Izara»-յից ջրախառնիր, խմի, որ դառնութեանդ բաժակն անցնէ։ Երգի, պարի ու ցնծութեան երկրից նման գեղատեսիլ ծննդավայրիդ—յաղթանդամ Basgues իդիլիա կոյսերի ձեռքերով աշխարհիս ամենանշանաւոր ողկոյզներից քամւած հեղուկն է այս Izara-ն որով կեցցէ են կոչւում Յօրելեարիդ երկար, բեղմնաւոր տարիներ մաղթում Աղբիւրը, Տարազը և Գրական-Գեղագիտական Սալօնը։

—

—Այսօր, կիրակի տ. Լ. Բ. Եաւորսկայի դրամատիկ խումբը ի պատիւ Հենրիխ Զուգերմանի 50-ամեայ գրական գործունէութեանն ներկայացնելու է նրա «Վարդեր» ստեղծագործութիւնը։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

—

Սովը տարածւել է մեր հայրենիքում այնպիսի մեծ ծաւալով, որ այլեւս մեր բարեգործական հաստատութիւնները չեն կարողանում օգնութեան հասնել։ Փոխարքային կոնդրամատոյց է եղել ժողովուրդը, զեկուցանելով իրերի իսկական վիճակը, խընդրելով մի քանի միլիոն րուբլի։ Այժմ ընտրեալներից մի մասնաժողով փոխարքայի խորհրդարանում նրա օգնականի նախագահութեամբ ծրագրում է օգնութեան ձեր և բաշխման միջոցները։

—

Հնդկաստանի և Պարսկաստանի Հայոց Առաջնորդ գերապատիւ Տ. Սահակ Արքեպիսկոպոս Այվազեանի Կալկաթայից գրած նամակից տեղեկանում ենք, որ իր ժամանակին Առաջնորդը հեռագրած է եղել Տ. Յուսիկ Արքեպիսկոպոսին և բժշկապետ Բ. Նալբանդեանին, որպէսզի սոքա ներկայանան Ս. Էջմիածնում, Վեհափառ Հայրիկի յուղարկաւորութեանը իբրև ներկայացուցիչք Հայոց Պարսկա-Հնդկաստանի Առաջնորդի և ժողովրդեան։ Սակայն, առ այժմ դեռ անյայտ պատճառով, չիշնալ ներկայացուցիչների և ոչ մէկը չէ ստացել հեռագիր և այսպիսով հայ ազգի մի ամբողջ հատւած զրկւել է հնարաւորութիւնից՝ իր ներկայացուցիչներն ունենալ իրանց սիրելի Ամենայն Հայոց Հայրապետի յուղարկաւորութեանը։

—

Մամուլի կարծեցեալ ազատութիւնը, ինչպէս երկու տարի առաջ գուշակել էինք, կործանեց Իւսական մամուլը ընդհանրապէս և հայկականը մասնաւորապէս։ Հայ մամուլը առանց բացառութեան օրհասական, հոգեւարք վիճակի մէջ է և պահւում է նման այն հիւանդին, որ կրիզիսի ժամանակ սըրսկւում է մուսկուսով։ Սակայն կենցղի շուտով կրէզիսը և եղած մուսկուսը բաւականութիւն կը՞ տայ...

Մշակը Արծրունու ժառանգներից անցաւ այս տարւանից պ. պ. Ալ. Քալանթարին, Յովհ. Տէր—Մարկոսեանին և Համբ. Առաքելեանին։ Բնական է ծախսերը որոշ չափով կը պակասեն, մանաւանդ երբ Թերթի չափից դուրս նախկին դիրքն էլ արդէն փոքրացրել է և տպագրւում է աւելի ձեռնտու պայմաններով։

Մշակը թարգման հանդիսանալով ազգի և պահպանողական կուսակցութեան, որն այլեւս հրապարակի վրայ չունի իր օրգանը,—այժմս աւելի անկիրք և խղճմտանքով է վերաբերւում ընթացիկ կեանքին։

***

Դաշնակցութեան օրգան Վտակը չը կամենալով շեղւել իր իսկական կոչումից, կարծէք չէ ձգտում հասարակական լրագրի ընդհանուր կեանքն արտայատելու, մինչդեռ Վտակն ունենալով և նիւթական ապահովութիւն կարող էր իր գրական ոյժերով մրցել Մշակի հետ, երկու կողմն էլ վերջ դնելով այն անհաճոյ և ապարդիւն վերաբերմունքը, որ անցեալ տարի իր գագաթնակէտին հասցրեց ի վնաս թէ Մշակի և թէ Դաշնակցութեան։ Այս մասին մենք ընդարձակ ասելիք ունենք։

***

Հրատարակւում է այժմս և մի օրագիր Անկախ Մամուլ, խմբագիրները անկախ չեն. Թերթը հրատարակւում է սկսած օրից մինչև այժմս դեռ կանոնաւոր։ Ունի լրագրների բոլոր բաժինները և ևռում է կեանքը. ցանկանում ենք յարատևութիւն, որին ապահովացայ ենք, եթէ դրամ լինի։

***

Շաբաթաթերթերից անխափան